Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքի ընթացքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝ Թումասյան Դավիթ, Ավետյան Հայկ, Թումաղայան Էդուարդ

Ուղեցույցը մշակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարության ֆինանսավորմամբ՝ «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող

«Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցը միտված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188-190-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների (այսուհետ՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման) դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով տուժող ճանաչված՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց (այսուհետ՝ տուժող) իրավաբանական օգնություն ցուցաբերելիս տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումներն ապահովմանը: Ուղեցույցով ներկայացվում են նաև այդ վարույթներով դատավարական գործողությունների առանձնահատկությունները, դրանց իրականացման հետ կապված որոշ տակտիկական և մեթոդական մոտեցումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 188-190-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ քրեական վարույթների (այսուհետ՝ քրեական վարույթներ) ընթացքում պետք է ապահովվի՝

1) յուրաքանչյուր տուժողի իրավունքների և կարիքների հարգումը՝ հաշվի առնել տուժողի առանձնահատկությունները,

2) մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողներին օժանդակություն և պաշտպանություն՝ գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ,

3) տուժողի նկատմամբ զոհակենտրոն մոտեցում, իսկ եթե տուժողը 18 տարին չլրացած անձ է՝ նաև երեխայակենտրոն մոտեցում:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով տուժողների իրավունքներն ու դրանց իրացումն ապահովելով՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողների հետևյալ իրավունքներին՝

1) հասկանալու և հասկացված լինելու,

2) քրեական վարույթի վերաբերյալ պարբերաբար տեղեկություն ստանալու,

3) լսված լինելու,

4) մեղադրյալի հետ անմիջական շփումը կանխելու,

5) անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության և հարգանքի,

6) ահաբեկումից, վրեժից կամ տուժողի կարգավիճակով պայմանավորված այլ ապօրինի ազդեցությունից պաշտպանությունն ապահովելու:

4. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողների նկատմամբ զոհակենտրոն մոտեցում դրսևորվում է՝

1) հանցագործության հետ չկապված հարցեր անհարկի չտալով,

2) հնարավորինս բացառելով այնպիսի գործունեություն, որի արդյունքում կիրականացվի լրացուցիչ հարցաքննություն, բացառությամբ հիմնավոր անհրաժեշտ դեպքերի,

3) անհարկի չմիջնորդելով հետաձգել քննչական կամ այլ վարութային գործողությունները,

4) ապահովելով տուժողի հետ տեղեկությունների փոխանակման պարբերականությունը.

5) տուժողի անվտանգությունից, նրա տարիքից կամ առողջական, ներառյալ՝ հոգեկան վիճակից ելնելով՝ պահանջել հարցաքննությունը կամ առերեսումը կազմակերպել ռիսկերը գնահատելուց հետո,

6) տուժողներին թերահավատորեն չվերաբերվելով և չդատապարտելով,

7) բացառելով բացասական բարոյահոգեբանական բնութագրի հիման վրա կարծրատիպային վերաբերմունքը:

5. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը, անկախ տարիքից, սեռից կամ այլ հատկանիշներից, լիարժեք կարող է իրականացնել հաղորդում ներկայացնելու իրավունքը, ներառյալ՝ քննչական կամ այլ վարութային գործողությունների ընթացքում:

6. Եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի մասնակցությամբ պետք է իրականացվի ընթերակայի պարտադիր մասնակցությամբ քննչական կամ այլ վարութային գործողություն, ապա ցանկալի է, որ ընթերական և տուժողը լինեն նույն սեռի ներկայացուցիչներ:

7. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի մասնակցությամբ քննչական կամ այլ վարութային գործողություններ պլանավորելիս հաշվի են առնվում՝

1) քննչական կամ այլ վարութային գործողության անցկացման վայրը և ժամանակը որոշելը՝ ելնելով տուժողի առանձնահատկություններից և հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը,

2) քննչական կամ այլ վարութային գործողությունների անցկացումը հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից կամ նրանց մասնակցությամբ,

3) քննչական կամ այլ վարութային գործողությունները նույն անձի կողմից իրականացնելու հնարավորությունը,

4) տեսաձայնագրության կամ ձայնագրության կիրառման հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 188-190-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՏՈՒԺՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց մասնակցությամբ քննչական կամ այլ վարութային գործողությունների ընթացքում, բացի օրենսդրությամբ նախատեսված պայմանների, անհրաժեշտ է՝

1) ապահովել քննչական կամ այլ վարութային գործողությունների իրականացումն օդափոխվող, բնական և արհեստական լուսավորության հնարավորություն ունեցող սենյակներում,

2) չծխել քննչական կամ այլ վարութային գործողությունների ընթացքում,

3) բացառել այլ անձանց ներկայությունը, ներառյալ՝ նույն հաստատությունում կամ մարմնում աշխատող այլ անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց, բացառությամբ կոնկրետ գործողությանն օրենքով մասնակցելու իրավունք ունեցող անձանցից,

4) չզբաղվել քննչական կամ այլ վարութային գործողությանը չառնչվող գործողություններով (չպատասխանել հեռախոսազանգերի, չխաղալ հեռախոսով կամ համակարգչով, քրեական վարույթի հետ առնչություն չունեցող հարցերի վերաբերյալ քննարկումներ չկազմակերպել տուժողի կամ այլ մասնակիցների հետ և այլն),

5) պարզել տուժողի ֆիզիկական և ֆիզիոլոգիական վիճակը (առողջական վիճակը, քաղցած կամ ծարավ լինելը, անհանգստությունները կամ անհարմարությունները), որոնք կարող են դժվարացնել քննչական կամ այլ վարութային գործողության իրականացումը,

6) տեղեկացնել տուժողին քննչական կամ այլ վարութային գործողության մոտավոր կամ առավելագույն տևողությունը,

7) ստեղծել հնարավորություն, որ տուժողն ինքն ընտրի, թե որտեղ կարող է նստել քննչական կամ այլ վարութային գործողության ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փակ տարածությունում նստեցնել դեմքով դեպի դուռը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 188-190-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողին հարցաքննելիս կամ այլ քննչական գործողություններ իրականացնելիս պետք է ապահովված լինի՝

1) առանց անհիմն հետաձգման հարցաքննություն կազմակերպումը,

2) հնարավորության սահմաններում հարցաքննությունների քանակի կրճատումը,

3) տուժողի ուղեկցումը վերջինիս կողմից ընտրված անձանց (փաստաբան, հոգեբան և այլն) կողմից, եթե հակառակ հիմնավոր որոշում չի կայացվել,

4) բժշկական փորձաքննության նշանակումը միայն խիստ անհրաժեշտության դեպքում,

5) տուժողի բժշկական զննումների քանակի կրճատումը:

10. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողներին հարցաքննելիս անհրաժեշտ է՝

1) հարցաքննության ողջ ընթացքում լինել հանգիստ, առնվազն դրսևորել հանդարտ վարքագիծ,

2) չկատարել մարմնի այնպիսի շարժումներ, որոնք բացասական վերաբերմունք են արտահայտում,

3) ներկայանալ կամ ներկայացնել հարցաքննությանը ներկա գտնվող այլ անձանց և բացատրել նրանց գործողությունները,

4) հայտնել հարցաքննության անցկացման պատճառների մասին՝ օգտագործելով տուժողի համար հասկանալի բառեր և արտահայտություններ՝ չնսեմացնելով վերջինիս պատիվն ու արժանապատվությունը և չօգտագործելով կարծրատիպային արտահայտություններ կամ պիտակավորումներ,

5) չդատապարտել կամ որևէ դժգոհություն չարտահայտել, երբ տուժողը պատմում է տեղի ունեցածի մասին,

6) չընդհատել տուժողին, բացառությամբ՝ նրա ասածը ճշտելու նպատակով, չտալ հուշող հարցեր,

7) չտալ միաժամանակ մի քանի հարցեր, առաջին հարցի պատասխանը ստանալուց հետո անցնել հաջորդ հարցին,

8) չտալ «ինչո՞ւ»-ով սկսվող հարցեր, քանի որ դրանք կարող են առաջացնել մեղավորության զգացում,

9) չձևակերպել հարցերն այնպես, որ օգտագործվի կրավորական սեռը, այլ կիրառել միայն ներգործական սեռը,

10) չտալ խոստումներ, որոնց իրականացումն այդ մասնակցի լիազորություններից դուրս են կամ վերահսկելի չեն,

11) չկիրառել բազմիմաստ կամ հռետորական հարցեր, կրկնակի ժխտումներ,

12) թույլատրել տուժողին տալ կարևոր թվացող ցանկացած հարց և մեկնաբանություն:

11. Եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողը 18 տարին չլրացած կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ է, ապա հարցաքննության ընթացքում պետք

է կիրառվեն պարզ և համառոտ նախադասություններ, հնարավորինս չկիրառվեն ժխտական նախադասություններ:

12. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողի հարցաքննությունը պետք է կազմակերպվի նրա հոգեբանական վիճակը հաշվի առնելով: Եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողի մոտ նկատվում է հոգեկան վիճակի սրացում, ապա պետք է ընդհատել հարցաքննությունը:

13. Քրեական վարույթներով մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողի հարցաքննությամբ անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները՝

1) երբ, որտեղ, ինչ հանգամանքներում է հանդիպել հանցագործության ենթադրյալ կատարողի հետ,

2) երբ են ծանոթացել, ինչ փոխհարաբերությունների մեջ են գտնվել,

3) ինչ մասնագիություն ունի, ինչով է զբաղվել նախքան հանցագործության ենթադրյալ կատարողի հետ հանդիպելը,

4) ինչպիսի գույքային դրություն է ունեցել, պարտքեր ունեցել է, թե՝ ոչ, ովքեր են այդ մասին տեղյակ եղել, ինչպես են ձևավորվել պարտքերը,

5) հանցագործության ենթադրյալ կատարողի հետ ընդհանուր ծանոթներ ունի, թե՝ ոչ,

6) ինչ տեսակի շահագործման է ենթարկվել, գիտակցում է արդյոք, որ շահագործվել է,

7) իր նկատմամբ բռնություն կիրառվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա բժշկական հաստատություն դիմել է, թե՝ ոչ,

8) անձը հաստատող փաստաթուղթ իրենից պահանջվել կամ վերցվել է, թե՝ ոչ, ազդեցության այլ ինչպիսի միջոցներ են կիրառվել անձի նկատմամբ,

9) երբ անձը գիտակցել է, որ ենթարկվում է շահագործման՝ որևէ անձի կամ իրավապահ մարմնի դիմել է, թե՝ ոչ, կամ պատմել է դրա մասին, եթե այո, ապա ցանկալի է ներկայացնել մանրամասները,

10) ովքեր են տեղյակ եղել, որ անձը ենթարկվում է շահագործման, ինչպիսի վարքագիծ են դրսևորել դա իմանալուց հետո,

11) ենթադրյալ հանցանք կատարած անձը, բացի իրենից այլ անձանց շահագործել է, թե՝ ոչ, եթե այո, ապա ներկայացնել մանրամասները,

12) իր կողմից շահագործման բնույթով պայմանավորված գործողություններ կատարելու գործընթացը որևէ անձի կողմից անմիջականորեն վերահսկվել է, թե՝ ոչ, ինչպիսի վերահսկողական մեխանիզմներ են կիրառվել,

13) եթե դեպքը վերաբերվում է աշխատանքային շահագործման, ապա որևէ պայմանագիր, այդ թվում՝ ձևական բնույթ կրող որևէ փաստաթուղթ, ստորագրվել է, թե՝ ոչ,

14) որոնք են եղել իր աշխատանքային պարտականությունները կամ մատուցվող ծառայությունները, որոնց վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել և ինչ էր փաստացի կատարվում, դրանց դիմաց անձը որևէ ձևով վարձատրվել է, թե՝ ոչ,

15) աշխատանքային պարտականությունների կատարման հետևանքով առողջական խնդիրներ ունեցել է, թե՝ ոչ, եթե այո, ապա որևէ մեկին այդ մասին հայտնել է, թե՝ ոչ, դիմել է բժշկական օգնություն ստանալու համար, եթե այո, ապա ինչ է արվել դրանից հետո,

16) եթե դեպքը վերաբերում է սեռական շահագործման, ապա ով է ապահովել հաճախորդներով, ինչպես, ինչ պայմաններում,

17) անձն ունեցել է հնարավորություն որևէ հաճախորդին սեռական ծառայությունների մատուցումը մերժելու, թե՝ ոչ,

18) ստիպել են արդյոք անձին մատուցել սեռական բնույթի ծառայություններ ամսվա այնպիսի օրերին, երբ ֆիզիոլոգիական վիճակով պայմանավորված դա անհնարին է, թե՝ ոչ,

19) անձի ազատ տեղաշարժվելը որևէ անձի կողմից վերահսկվել է, թե՝ ոչ, ինչպիսի վերահսկման մեխանիզմներ են կիրառվել,

20) անձի կողմից վաստակած գումարն ամբողջությամբ է տրվել շահագործող անձին, թե դրա մի մասը,

21) ինչ կլիներ, եթե անձը չտար իր աշխատած գումարը վերահսկողներին կամ շահագործողներին,

22) իր և շահագործող անձի մեջ եղել են արդյոք պայմանագրով կամ բանավոր պայմանավորվածությամբ գումարային պարտք ու պահանջի հարաբերություններ, թե՝ ոչ,

23) հաճախորդները տեղյակ եղել են, որ ինքը ենթարկվում է շահագործման, թե՝ ոչ,

24) կոնկրետ վայրերում է մատուցել ծառայություններ, թե տարբեր, հնարավորություն ուներ փոխել ծառայություններ մատուցելու վայրը,

25) շահագործման կոնկրետ դեպքով պայմանավորված այլ հանգամանքներ:

14. Սույն ուղեցույցի 13-րդ կետում նշված հանգամանքները սպառիչ չեն և ենթակա են վերանայման քրեական վարույթից ելնելով:

15. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողի մասնակցությամբ առերեսումն անցկացնելիս ցանկալի է բացառել մեղադրյալի հետ անմիջական շփումը և առերեսումն իրականացնել տեսաձայնագրության, տեսակապի կամ այլ տեխնիկական հնարքների օգտագործմամբ այնպես, որ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողները չենթարկվեն երկրորդային զոհականացման կամ չավելանա նրանց տրավմատիզացիան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 188-190-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով անձին մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու դեպքում՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի հետ առնչվող անձը դիմում է գործընկեր հասարակական կազմակերպություն կամ Հանրային պաշտպանի գրասենյակ՝ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

17. Սույն ուղեցույցով նախատեսված պահանջների պահպանումը փաստաբանի համար պարտադիր է մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի հետ շփման առաջին պահից:

18. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով քրեական վարույթներով տուժողի շահերը ներկայացնող փաստաբանն իր վստահորդի հետ կոնֆիդենցիալ շփումների դեպքում պարտավոր է զոհակենտրոն, իսկ երեխայի դեպքում՝ նաև երեխայակենտրոն մոտեցում դրսևորել:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Սույն ուղեցույցով չկանոնակարգված հարաբերությունները և հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և այլ իրավական ակտերով: